մտախոհ լինելով՝ որ այդ մոխրակոյտներուն մէջ հազարաւոր հայ կեանք կը մաշի՝ զրկուած բնութեան այն հաճոյական վայելից՝ որ երկիրը առատ կ'ընծայէ սակաւ մի զարգացեալ և աշխատասէր մշակին։

Ոչ ծառոց հովանի, ոչ պտղատու պարտէզ, ոչ բանջարանոց, և ոչ սեխեստան, զուրկ են յայսմ ամենայնէ Թոփթիցիք, ցաւալի վիճակ։ Այլ ո՞վ է այդոր պատճառը։ Ըստ իմ կարծեաց եթէ քանի մի բանիբուն և գործող անձինք բանիւ և գործով առաջնորդ լինին Նախիջեւանու գեղացւոց՝ քիչ տարիներու միջոց բոլորովին կերպարանափոխ կը լինին այն տխրատեսիլ և անապատացեալ գիւղերը։ Օրինակ կարնան լինել երբեմն անբոյս և անդալարի գիւղերն Տաւրիոյ, յորս առաջ Թաթարք կը բնակէին, և այժմ Գերմանացիք դրախտ դարձուցին, մոխրակոյտ դէղերը ծածկուեցան անտառներուն և պարտիզներուն հովանեաց տակ. անգետ և անտաւու տեղուանք՝ փոխեցին քաղցրաղուր հորեր, յարդածածուկ և խղճատեսիլ ցիր ու ցան անկանոն հիւղերուն փոխանակ՝ շինեցին կանոնաւոր յատակագծի վրայ կարմիր կղմինտրով ծածկուած տներ. փոխան ծոյլ Թաթարաց այլանդակ սայլերուն, որոց լիսեռանց անախորժ ճռնչիւնն ականջ կը խլացընէր, Գերմանացիք թեթևընթաց սայլեր և կառքեր կը գործածեն, որոց լծուած լայնաքամակ ձիանքն վայելչաձև խամութներով՝ տեսնողին նախանձն կը շարժեն։ Մի և նոյն երկրին հողագործք, առաջինք իրենց ծուլութեան և անհոգութեան համար՝ կարօտութեան մէջ տուայտեալ, մինչդեռ յետինք ժրաջան մշակելով Թաթարաց գետինները, օր աւուր յառաջադիմելով կը ճո-